* * *

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑԻ

Ողջոյն ձեզ, ողջոյն, հայրենի՛ լեռներ,
Շատ տարի առաջ, ինչպէս և այսօր,
Ձեր հրսկայական ձիւնոտ կատարներ
Փայլում են պայծառ. թէև ալևոր
Դուք նոյնպէս հրպարտ, անշարժ, անսասան
Նայում էք հիմա բարձր հորիզոնից,
Որպէս և այնօր, երբ լուռ և անձայն
Դրնում էի ես սիրած աշխարհից։

Ողջոյն ձեզ, կանաչ արտ ու արօտներ,
Կապոյտ ու կարմիր հանդերձով կոկուած
Ծրպտում են ձեր մէջ դարնան ծաղիկներ,
Նոյնպէս գեղեցիկ, որպէս և առաջ.
Նոյն ականակիտ հոսում է գետակ,
Նոյն փրրփրրալից ալիքն են վազում,
Եւ քաղցր է նոյնպէս նոցա եղանակ,
Որպէս և վաղուց անցած օրերում։

Ահա՛ նաև դուք... Ողջոյն ձեզ, ողջոյն,
Փոքրիկ, փոշելից տուն ու փողոցներ.
Ձեր մէջ անցկացրած ուրախ մանկութիւն
Զարթնում է կրրկին. ձեր կոպիտ քարեր,
Ձեր հողն ու փոշին ես դեռ չեմ փոխել
Աշխարհիս բոլոր հարրստութեան հետ,

Երազներիս մէջ ես ձեզ եմ տեսել,
Ես ձեզ եմ սիրել հայրենիքիցս յետ։

—

Դուք նոյնն էք կըրկին. նոյնպէս ոլորուած
Կորչում է փողոց զառիվայրի մէջ,
Նոյնպէս կանգնած են և յետ ու առաջ
Տընների շարքերն երկար ու անվերջ.
Ո՛րքան քաղցր օրեր, խաղեր մանկական
Կապուած են ձեզ հետ հոգուս խորքերում.
Ողջոյն ձեզ կըրկին.—առաջուայ նըման
Ես ձեզ հիւրընկալ, ուրախ եմ տեսնում։

—

Բայց ո՞ւր ես արդեօք, հայրենի՛ տընակ.
Միթէ կուրացա՞ն յանկարծ իմ աչքեր,
Միթէ երազո՞ւմ ես քո փոխանակ
Տեսնում եմ միայն ցիրուցան քարեր.
Եւ ո՞ւր է Ծերուկս... ո՞ւր են մեղմաձայն
Մի հատիկ որդու համար մըրմունջներ...
Ա՛խ, ողջոյն, ողջոյն, մոռացուած տապան,
Ողջոյն ձեզ, քանդուած, աւերուած պատեր։